ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 սեպտեմբերի 2023 թվականի N 359 -Ա

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՀԱՅԿ ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2335-Ն և 2018թ. նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշումներով հաստատված կարգերով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանին, մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Հայկ Կարախանյանին և առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Արամ Շահնազարյանին 2 օրով՝ 2023թ. սեպտեմբերի 24-ից 25-ը գործուղել Գորիսի կոորդինացիոն կենտրոն՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակիչների առաջնային հաշվառման և կարիքների գնահատման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

2. Մարզպետի աշխատակազմի սպասարկող անձնակազմի վարորդ Սեյրան Աղալոյանին՝ Հյունդայի Սոնատա մակնիշի 421 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

4. Հ. Կարախանյանին և Ա. Շահնազարյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 22
ք. Կապան